«Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ

ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

Հավելված

ՀՀ կառավարության

2017թվականի --------- N

արձանագրային որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Ի. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. <<Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգը>> (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը:

II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հայեցակարգով ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման (ռեկուլտիվացիայի) համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման նպատակով ընդերքօգտագործողների կողմից վճարումների փաստացի վիճակը, անդրադարձ է կատարվում նրանց կողմից այդ վճարումների ապահովման մեխանիզմներին, ռեկուլտիվացիոն ֆոնդի կառավարման ներկայիս վիճակին և դրանց արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ առաջարկվող լուծումներին:
3. Հայեցակարգը առաջ կքաշի մի շարք տարբերակներ և գաղափարներ, որոնց կիրառման միջոցով հնարավոր կլինի լուծել ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման աշխատանքների ծրագրավորումը, ֆինանսավորումը և իրագործումը՝ միևնույն ժամանակ համապատասխան պայմաններ ստեղծելով նախկինում դադարեցված, լքված, տիրազուրկ հանքավայրերի տարածքների խախտված հողերի վերականգնման համար ֆինանսավորման միջոցների աղբյուրների առաջացմանը:

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

4. Հայեցակարգը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշման 1-ին հավելվածի 77-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 646-Ա որոշմամբ հավանության արժանացած հավելվածի 4.4-րդ բաժնի 6-րդ կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերի:
5. Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացիայի ծրագիրը ներառվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում և հիմնական հաշվետվությունում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրում, օգտակար հանածոների արդյունահանման նախագծում, հանքի փակման ծրագրում:
6. Հայեցակարգի նպատակն է ընդերքօգտագործման արդյունքում ընդերքօգտագործողների կողմից խախտված հողերի ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ռեկուլտիվացիոն ֆոնդի դրամական միջոցների արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակումը:
7. 7. Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման շարժիչ ուժը: Հանքարդյունաբերությունը տնտեսության մեջ հիմնական արտարժույթ ստեղծողն է և 2017թ. ապրիլի դրությամբ այն կազմում է արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալի 21 %-ը:

Սակայն ներդրումների միջոցով ոլորտի մեծածավալ կարճաժամկետ օգուտներ ստանալու ներուժը հաճախ ստվերում է թողնում շրջակա միջավայրի և տեղական համայնքների վրա ոլորտի թողած հնարավոր բացասական ազդեցությունը: Հանքարդյունաբերության ոլորտն ունի դրական, երկարաժամկետ և կուտակային ազդեցություն տնտեսության վրա, սակայն անհրաժեշտ է, որպեսզի հաշվի առնվեն նաև բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, այդ թվում նաև ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

8. 8. Ընդերքօգտագործման աշխատանքները դադարեցնելուց հետո հանքավայրի և օգտակար հանածոների արդյունահանման համալիրի տարածքները ռեկուլտիվացվում են՝ անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակին վերադարձնելու նպատակով:
9. Հանքի փակման ծրագրի հիմնական պայմաններից մեկը ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման մեթոդների, եղանակների և ծավալների ընտրությունն է, անհրաժեշտ գումարների գնահատումն է, ինչը ներառված է Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի այն դրույթներում, որոնք վերաբերվում են հանքի փակման ծրագրի ֆինանսական երաշխիքներին և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վճարների իրականացմանը:
10. Հանքի փակման, այդ թվում՝ ռեկուլտիվացիայի ծրագրում մանրամասն նկարագրվում են, թե ինչպես են ընդերքօգտագործողները վերականգնելու խախտված տարածքը՝ բերելով այն անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակին:
11. Հանքերից շատերը փակվում են նախատեսվածից շուտ և հետևաբար այդ ընդերքօգտագործողները չունեն հանքի փակման մշակված ծրագիր: Հանքի փակմանը, այդ թվում ռեկուլտիվացիայի ծրագրին և դրանց իրականացմանը անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սկսած նախագծման փուլից՝ հանքի արդյունավետ փակում ապահովելու և փակման չնախատեսված կամ չպլանավորված դեպքերի բացասական հետևանքները մեղմացնելու նպատակով:
12. Ռեկուլտիվացիոն աշխատանքների աստիճանական իրականացման դեպքում հնարավոր է կատարել հանքի փակման ընթացիկ աշխատանքների արդյունավետության գնահատում և անհրաժեշտության դեպքում նախագծով և/կամ ծրագրով նախատեսված միջոցառումների փոփոխություն:
13. Հանքերի փակումը, այդ թվում՝ ռեկուլտիվացիոն աշխատանքները պահանջում են զգալի ռեսուրսներ և ֆինանսավորում, որոնք հաշվի են առնվում նախագծման փուլում:

IV.ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

14. Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման ենթակա գումարներն ընդերքօգտագործողները սկսել են վճարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N1128-Ն որոշումն ընդունվելուց հետո (Որոշումը չեղյալ է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշմամբ): Մինչ այդ, դեռևս խորհրդային

ժամանակներում նաև, փակված, դադարեցված, լքված, տիրազուրկ հանքավայրերի խախտված հողերի վերականգման համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացումներ չեն իրականացվել:

15. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով:
16. Ընդերքօգտագործողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ (ռեկուլտիվացիոն ֆոնդ), որի օգտագործման հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշմամբ:
17. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման ենթակա վճարները ընդերքօգտագործողների կողմից իրականացվում են նախնական և ընթացիկ հատկացումների ձևով: Նախնական հատկացումը կատարվում է համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրի ստորագրման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում, իսկ ընթացիկ հատկացումները կատարվում են համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրով ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար սահմանված ժամանակացույցով նախատեսված ժամկետներում, իսկ եթե պայմանագրով չի սահմանված ընթացիկ հատկացումների կատարման ժամանակացույց, ապա հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար:
18. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարվող գումարները պահվում են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական գանձապետարանում բացված՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) արտաբյուջետային հաշվում:
19. Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամկետները երկարատև են (մինչև 50 տարի) և այդ ժամանակահատվածում հանքի շահագործման ընթացքում տեղի է ունենում փաստացի իրավիճակների՝ խախտված հողերի փաստացի մակերեսների, հանքի փաստացի տարեկան արտադրողականության փոփոխություն, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառում, գնաճ և այլն:
20. ՀայաստանիՀանրապետությանտարածքում ընդերքօգտագործմաննպ ատակովտրամադրվածհողերիընդհանուրմակերեսը նախնական խոշորացված գնահատականներով կազմումէ 13640հա (0,45%):
21. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված է, որ ընդերքօգտագործողը հանքի փակումից 2 տարի առաջ ներկայացնում է հանքի փակման վերջնական ծրագիր, իսկ հրաժարման դեպքում՝ հրաժարման դիմումին կից ներկայացնում է խախտված հողերի վերականգման (ռեկուլտիվացիոն) ծրագիր:
22. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի նոյեմբերի 22-ի N309-Ա հրամանով հաստատվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

Աշխատակարգի համաձայն ընդերքօգտագործողին դրամագլխից հատկացումներ կատարելու համար հանձնաժողովի կողմից պետք է տրվի ընդերքօգտագործողի կողմից կատարված ռեկուլտիվացիոն աշխատանքների հավաստիության և կատարման որակի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն, որի հիման վրա էլ լիազոր մարմինը որոշում է ընդունում ընդերքօգտագործողին դրամագլխից գումար հատկացնելու կամ չհատկացնելու մասին:

23. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանով հաստատվել է ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը, որի համաձայն հաշվարկված ռեկուլտիվացիոն աշխատանքների արժեքը ինդեքսավորվում է լիազոր մարմնի համաձայնությամբ՝ ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ, եթե նյութերի, պատրաստվածքների և կառուցվածքների համար շուկայական գներն աշխատանքների արժեքի հաշվարկի հիմքում դրված գների համեմատ աճել են ավելի քան 10 տոկոսով:
24. Վերը նշված իրավական ակտերի կիրառման արդյունքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվեհամարում 2017 թվականի հունիսի 1-ի դրությամբ հավաքագրվել է 1223496 748,90 ՀՀ դրամ: Ընդերքօգտագործման իրավունքները դադարեցրած 105 ընկերությունների կողմից վճարվել է 66 009 260 ՀՀ դրամ՝ նախագծերով կամ ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված 190 824 620 ՀՀ դրամ ընդհանուր գումարի փոխարեն:
25. 25. Ըստ համաշխարհային բանկի փորձագետների կարծիքի՝ Հայաստանում հանքերի փակման և խախտված հողերի վերականգման աշխատանքների կարգավորումները համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Սակայն այդ աշխատանքների իրականացման ժամանակ այնուամենայնիվ առաջանում են մի քանի խնդիրներ, որոնք հիմնականում կապված են ֆինանսական երաշխիքների և պարտավորությունների հետ:
26. ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին>> N 646-Ա որոշման 4.4 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնի 6-րդ կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերով նախատեսվում է ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարների հասցեական օգտագործման և խախտված հողերի վերականգնման նպատակով՝ մինչև 2017 թվականի ավարտն ընդունել ռեկուլտիվացիոն ֆոնդի կառավարման հայեցակարգը և 2018-2020 թվականների ընթացքում ներդնել հայեցակարգի դրույթների կիրարկումն ապահովող մեխանիզմներ:

V. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

27. Հայեցակարգում դիտարկվում են ընդերքօգտագործողների և լիազոր մարմնի կողմից ռեկուլտիվացիոն ֆոնդի գումարների արդյունավետ կառավարման և ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման աշխատանքների կատարմանն ուղղված պարտականությունների ապահովման խնդիրները:

28. 2011 թվականի նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի ընդունումից հետո անցումային ժամանակահատվածում բազմաթիվ ընդերքօգտագործողներ չեն վերաձևակերպել իրենց ընդերքօգտագործման իրավունքները՝ այդ թվում՝ ամբողջությամբ չեն վճարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները և չեն իրականացրել ռեկուլտիվացիոն աշխատանքներ, որի արդյունքում մնացել են խախտված հողատարածքներ:
29. Սկսած խորհրդային ժամանակներից մինչև 2003 թվականը ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողատարածքները հիմնականում չեն վերականգնվել, քանի որ բացակայել են այդ աշխատանքները կարգավորող իրավական ակտերը և կանոնակարգերը, և հետևաբար առաջացել են նախկինից ժառանգած բնապահպանական խնդիրներ:
30. Ընդերքօգտագործողների սնանկացման և խախտված հողերի վերականգման ծախսերը վճարելու անկարողության պայմաններում բացակայում են պետության կողմից ընդերքօգտագործողի փոխարեն խախտված հողերի վերականգնման աշխատանքներ կատարելու նպատակով ֆինանսական ապահովման մեխանիզմները:
31. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվեհամարում հավաքագրված գումարները չեն բավարարում ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար, քանի որ այդ աշխատանքների նախահաշիվը կատարվել է նախագծային փուլում, իսկ հանքավայրերի ծառայման ժամկետները հիմնականում երկար են (մինչև 50 տարի), հավաքագրված գումարները մնում են սառեցված վիճակում և ժամանակի ընթացքում գնաճի պատճառով արժեզրկվում են, քանի որ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանի ռեկուլտիվացիոն աշխատանքների ինդեքսավորումը իրականացվում է ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ, ինչը հիմնականում պրակտիկայում չի իրականացվում:
32. Բացակայում են դադարեցված, լքված, ապօրինի շահագործված, տիրազուրկ հանքավայրերի խախտված հողերի վերականգման ֆինանսավորման աղբյուրները:
33. Ռեկուլտիվացիոն աշխատանքների հետ կապված հիմնական իրավական ակտերն ամբողջությամբ չեն ապահովում այն ֆինանսական և արդյունավետ կառավարման միջոցները, որոնք կերաշխավորեն այդ աշխատանքների ամբողջական իրականացումը: Այդ աշխատանքների հետ կապված ծախսերն ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են լրացուցիչ բեռ հանդիսանալ պետության համար:
34. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասինօրենսգրքի պահանջներին համաձայն ընդերքօգտագործողները հանքի փակումից 2 տարի առաջ ներկայացնում են հանքի փակման վերջնական ծրագիր, իսկ հրաժարման դիմումին կից ներկայացնում են նաև օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիրը, ներառյալ՝ հանքի գոյության ընթացքում կատարած ռեկուլտիվացման աշխատանքները, որոնցում ներկայացված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հատկացումների գումարների չափերը համարժեք են

փաստացի ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գումարներին: Ընդերքօգտագործողների կողմից դրամագլխին նախագծային և փաստացի խախտված հողատարածքների վերականգնման համար անհրաժեշտ գումարների տարբերության վճարումների իրականացումն օրենսդրությամբ կարգավորված չի:

35. Ընդերքօգտագործողներին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ կատարելու նպատակով լիազոր մարմնի կողմից կատարված ռեկուլտիվացիոն աշխատանքների հավաստիության և կատարման որակի վերաբերյալ որոշում ընդունելու գործընթացը բարդ է և երկարացված, քանի որ այդ աշխատանքների վերաբերյալ պահանջվում է մասնագիտական հանձնաժողովի եզրակացությունը:
36. 2016 թվականի հոկտեմբերի 18-ին ընդունվել է <<Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՕ-161-Ն օրենքը, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման հետ կապված նոր ընթացակարգեր: Օրենքով սահմանվում է, որ ընդերքօգտագործողներն օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության շրջանակներում կարող են իրականացնել նաև ընդերքօգտագործման թափոնների վերամշակում: Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում հնարավոր են արտադրական լցակույտերով զբաղեցրած տարածքների մակերեսների և, հետևաբար, ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների փոփոխություններ: Դա իր հերթին կհանգեցնի ընդերքօգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշման դրույթների համապատասխան կատարվող հատկացումների փոփոխությանը: Մինչև 2017 թվականի մայիսի 4-ը օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների համար թափոնների վերամշակման, թափոններով զբաղեցրած տարածքների փոփոխության դեպքում կառաջանան կարգավորում պահանջող իրավահարաբերություններ: Հետևաբար, անհրաժեշտ է կարգավորել վերոնշյալ իրավահարաբերությունները՝ նախատեսելով ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների իրագործման ավարտին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարների վերահաշվարկման մեխանիզմ:
37. Լքված, դադարեցված, տիրազուրկ, կոնսերվացված հանքավայրերում բնապահպանական միջոցառումների չիրականացման, հանքավայրերի ռեկուլտիվացիայի կամ դրանց այլընտրանքային օգտագործման իրականացման բացակայության արդյունքում առաջանում են մարդկանց առողջությանը սպառնացող և երկարաժամկետ բնապահպանական ռիսկեր:
38. Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող հանքավայրերի գերակշռող մասում (ավելի քանի 95%) ընդերքօգտագործողների կողմից մշակվում և իրականացվում են միայն լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքներ, քանի որ բացակայում են ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման և տնտեսական յուրացման

նպատակով բարելավման միջոցառումների իրականացման մեթոդական հիմքերը և ուղեցույցերը:

39. Չնայած վերջին տարիների ռեկուլտիվացիոն ֆոնդի գումարների համալրման դրական փոփոխություններին, անհրաժեշտություն է առաջացել այն կառավարել արդյունավետ՝ սկսած նախագծման փուլից մինչև հանքի փակման և ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման ավարտը:
40. Հայեցակարգի նպատակն է ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման միջոցով լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվում հավաքագրված գումարների հաշվին ապահովել ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողատարածքների վերականգնման իրականացումը:

Միջազգային փորձ:

41. Միջազգային պրակտիկայում ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման ֆինանսավորումն ապահովելու համար կիրառվում են տարբեր ֆինանսական երաշխավորություններ՝ սկսած նախագծման փուլից մինչև հանքի փակումը:
42. Միջազգային պրակտիկայում ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման ապահովման համար ֆինանսական երաշխիքի գումարի հաշվարկման ժամանակ կիրառվում է երկու հիմնական մոտեցում.

1) հաշվարկվում են հանքի փակման և խախտված հողերի վերականգման ծախսերը՝ հիմնվելով հանքարդյունահանման գործունեության ազդակիր տարածքի վրա: Նախագծերի ֆինանսական երաշխավորության չափը հաշվարկվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր նախագծի առանձնահատկությունները: Այն հաշվարկվում է՝ վերականգնման միավոր ծախսը բազմապատկելով աշխատանքների մոտավոր գնահատված տարածքի մակերեսով: Ֆինանսական երաշխավորությունը վճարվում է աստիճանաբար, իսկ վճարման գումարը որոշվում է՝ հաշվարկելով նախագծով նախատեսված գործունեության պլանում ներառված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար: (օր.՝ Ավստրալիա (Քվինզլենդ) և Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն):

2) ֆինանսական երաշխիքը կարող է հիմնվել փակման և վերականգման մանրամասն ծրագրով նախատեսված աշխատանքների նախահաշվի վրա: Փակման ծրագիրն արտացոլում է տեղանքի բավարար վերականգնման համար պահանջվող բոլոր միջոցառումները: Ֆինանսական երաշխավորությունը պետք է բավարար լինի հանքի փակումից հետո իրականացվող երկարաժամկետ միջոցառումներն ապահովելու համար: Հաշվարկները հիմնվում են աշխատանքների համար պահանջվող ապրանքների ու ծառայությունների շուկայական արժեքի վրա: Ֆինանսական

երաշխավորության չափը որոշելիս հաշվի են առնվում նախագծի ավարտման հետ կապված ծախսերը, թեև վճարումները կատարվում են փուլային եղանակով (օր.՝ Օնտարիու, Կանադա):

43. Խախտված հողերի վերականգնումն ապահովելու համար կիրառվում են ֆինանսական երաշխավորության տարբեր գործիքներ, որոնք բաժանվում են երեք հիմնական խմբերի.

1) Ֆինանսական երաշխիքը պահվում է ընկերության մոտ,

2) Ֆինանսական երաշխիքը երաշխավորվում է երրորդ անձի (բանկի, առևտրային կազմակերպության) կողմից,

3) Ֆինանսական երաշխիքը փոխանցվում է կառավարությանը կամ հավատարմագրային ֆոնդին:

44. Միջազգային պրակտիկայում ֆինանսական երաշխիքի ամենաընդունված տարբերակն ակրեդիտիվն է կամ բանկային երաշխիքը: Ակրեդիտիվը բանկի կողմից ստանձնված պարտավորություն է որոշակի չափանիշների բավարարման դեպքում վճարում կատարելու մասին: Ակրեդիտիվի լայն կիրառումը բացատրվում է նրա վարչարարման պարզությամբ: Ակրեդիտիվի փաստաթղթին կից ներկայացվում են վերականգնման պայմանագրի պայմաններն ու համաձայնեցված ծախսերը: Ակրեդիտիվը կարող է փոփոխության ենթարկվել միայն բոլոր համապատասխան կողմերի համաձայնության հիման վրա: Ակրեդիտիվը երաշխավորում է արժեքի որոշակիությունը և այն կարող է լուծարվել կամ վերանայվել պահանջվող գումարի փոփոխման անհրաժեշտության դեպքում (օր.՝ Ավստրալիա (Քվինզլենդ), Կանադա):
45. Միջազգային պրակտիկայում կիրառվում են հավատրամագրային ֆոնդերը, պարտատոմսերը, որոնք ֆինանսական երաշխիքն ընկերությունից փոխանցում են երրորդ անձին: Հավատարմագրային ֆոնդերը փոխհատուցման պայմանագրեր են՝ կնքված ընդերքօգտագործող ընկերության կողմից, որոնց հիման վրա տվյալ ընկերությունը ռեկուլտիվացիայի ու հանքի փակման հաշվարկված ծախսերի արժեքին հավասար չափով պահուստավորում է գրավ, դրամական միջոցներ կամ դրանց համարժեքներ: Այս ֆոնդերը կամ ակտիվներն այնուհետև հանձնվում են հավատարմագրային կառավարման կարգավորող մարմնին, բանկին կամ որևէ այլ ֆինանսական կազմակերպությանը (օր.՝ Ավստրալիա (Վիկտորիա) և Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն):
46. Ըստ միջազգային պրակտիկայի դրամական ավանդը, որը բաղկացած է փակման ու վերականգնման բոլոր ծախսերը ծածկող գումարից, ներդրվում է բանկային հաշվին, որը հասանելի է միայն կառավարությանը: Եթե ընդերքօգտագործող ընկերությունը չի կատարում իր պարտավորությունները, ապա կառավարությունը կարող է ուղղակիորեն օգտագործել հաշվում առկա միջոցները: Դրամական միջոցների փոխարեն կիրառվում են նաև ներդրումային արժեթղթեր, օր.՝ կարճաժամկետ գանձապետական պարտատոմսեր, որոնք ենթակա են վճարման կառավարությանը մարման ժամկետը լրանալու պահին

կամ դրանից առաջ, ընդերքօգտագործողի կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում (օր.՝ Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն):

VI. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

47. Իրավական ակտերում կատարել փոփոխություններ, ապահովելու շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից կատարվող գումարների լիարժեք հավաքագրումը, որի արդյունքում վճարված գումարները բավարար կլինեն ընդերքօգտագործման արդյունքում ռեկուլտիվացիայի ենթակա խախտված հողատարածքների վերականգման աշխատանքների իրականացման համար:
48. Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համաձայն ընդերքօգտագործողը հանքի փակումից 2 տարի առաջ ներկայացնում է հանքի փակման վերջնական ծրագիր, հրաժարման դիմումին կից ներկայացնում է նաև օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիրը,ներառյալ՝ հանքի գոյության ընթացքում կատարած ռեկուլտիվացման աշխատանքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ մտցնելով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վերջնական հատկացման գաղափարը: Վերջինս հնարավորություն կտա ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գումարների հաշվարկման ժամանակ հաշվի առնել սղաճի բացասական ազդեցությունը և վերականգման ենթակա փաստացի խախտված տարածքների մակերեսները, և հետևաբար կապահովի հանքերի փակման ժամանակ խախտված տարածքների վերականգման աշխատանքների ֆինանսավորումը:
49. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվեհամարում հավաքագրված գումարները արդյունավետ օգտագործելու նպատակով ներդնել մեխանիզմ՝ ուղղված այդ գումարների բանկային հաշվին դրամական ավանդների ձևով ներդրումներից շահույթ ստանալուն:
50. Սահմանել և ներդնել ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման և օգտագործման համապատասխան մեխանիզմներ՝ խթանելու ընդերքօգտագործման թույլտվությունների ժամկետների ավարտից հետո խախտված հողատարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացումը:
51. Ավանդների ներդրումներից ստացած շահույթի մի մասն օգտագործել լքված, ապօրինի շահագործված, չվերաձևակերպված, տիրազուրկ, նախկինում ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված հանքավայրերի խախտված հողատարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար, առաջնահերթությունը տալով վերականգման ենթակա այն տարածքներին, որտեղ խախտված հողերի վերականգման համար կնախատեսվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:
52. Ավանդների ներդրումների շահույթից ստացած գումարների հաշվին

ապահովել վերականգնված հողերի արդյունավետ օգտագործում և վերադարձ տնտեսական շրջանառություն՝ լրացուցիչ եկամուտների ստացման նպատակով:

53. Հայաստանի Հնարապետության ընդերքի մասին օրենսգրքում կատարել փոփոխություններ և լրացումներ, որը կարգելի ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման և հրաժարման հավաստագրերի տրամադրման գործընթացներն իրականացնել առանց ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի մասնակցության:
54. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը ներկայացված է աղյուսակում:

VII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

55. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման արդյունքում կամրագրվի և կհստակեցվի ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի վճարների իրականացման իրավահարաբերությունները, որը կնպաստի այդ վճարների լիարժեք հավաքագրմանը, ինչի արդյունքում կապահովվի խախտված հողերի վերականգման աշխատանքների կատարման համար ֆինանսական երաշխիքները:
56. Լիազոր մարմնի կողմից ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման միջոցով կստեղծվի ապահով ֆինանսական միջոցներ՝ իրականացնելու ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ նախկինում խախտված և չվերականգնված տարածքներում, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի բարելավմանը և մարդկանց առողջության վրա վնասակար ազդեցության նվազեցմանը:
57. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգով սահմանված նոր մոտեցումները կխրախուսեն խախտված հողերի վերականգման համար կենսաբանական ռեկուլտիվացիայի լայնածավալ իրականացմանը:
58. Հայաստանի Հանրապետության փոքր տարածք ունեցող երկրում շրջանառության մեջ կներառվեն վերականգնված լրացուցիչ հողատարածքներ, որոնք կնպաստեն գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը՝ ապահովելով դրանց տնտեսական յուրացման հեռանկարները:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

59. Հայեցակարգով նախատեսված առաջնահերթ լուծումներ պահանջող՝ սույն հայեցակարգի միջոցառումների ցանկի աղյուսակում ներառված 1-3-րդ միջոցառումների իրականացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն չկա և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա լրացուցիչ բեռ չի առաջանում:
60. Միջոցառումների ցանկի 4-րդ միջոցառման իրականացման համար պահանջվում է շուրջ 300 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում, քանի որ միջին

հաշվարկով յուրաքանչյուր ախտորոշիչ ուսումնասիրություն, որում ներառում է գոնե մեկ միջազգային փորձագետ, կարժենա 100 – 150 հազ. ԱՄՆ դոլար: Շուրջ 100-150 հազ. ԱՄՆ դոլար կպահանջվի տեղական փորձագետների՝ մեթոդաբանությունների տեղայնացման մասով կատարվելիք ուսումնասիրությունների համար: Պահանջվող ֆինանսավորման համար անհրաժեշտ է աշխատանքներ իրականացել միջազգային դոնոր-կազմակերպությունների հետ:

61. Ընդերքօգտագործման թույլտվությունների ժամկետների ավարտից հետո խախտված հողատարածքներում կատարված ռեկուլտիվացիոն աշխատանքները կնպաստեն տվյալ տարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացմանը:
62. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման արդյունքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում հավաքագրված գումարները կապահովեն լրացուցիչ դրամական մուտքեր, որոնք կնպատակաուղղվեն ապօրինի շահագործված, չվերաձևակերպված, տիրազուրկ, նախկինում ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված հանքավայրերի խախտված հողատարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացմանը

IX. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

63. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգը կարևոր փաստաթուղթ է, որը հիմք կհանդիսանա լիարժեք հավաքագրելու շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հատկացումների գումարները և այդ գումարների ավանդների ձևով ներդրումների արդյունքում առաջացած եկամուտներն ուղղելու տասնամյակներ շարունակ ընդերքօգտագործման գործունեությունից ժառանգած և ընթացիկ գործունեության արդյունքում առաջացած խախտված հողերի վերականգմանը՝ ապահովելով շրջակա միջավայրի պահպանության հետագա կայուն զարգացումը, բարելավման ու վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման պահանջները և մարդկանց առողջության վրա վնասակար ազդեցության նվազեցումը:

Աղյուսակ

<<Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգ>>-ի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ

N N ը/կ	**Միջոցառման անվանումը**	**Պատասխանատու կատարողը**	**Համակատարողը**	Ակնկալվող վերջնական արդյունքը
1.	«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	ՀՀ բնապահպանության նախարարություն	-	**Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարների արդյունավետ կառավարում,** ռեկուլտիվացիոն ֆոնդից

մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	անհրաժեշտ դրամական միջոցների նպատակային օգտագործում՝ 1.Լիազոր մարմնի սեփական նախաձեռնությամբ՝ լքված, ապօրինի շահագործված, չվերաձևակերպված, տիրազուրկ, նախկինում ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված հանքավայրերի խախտված հողատարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում: 2.Իրավահարաբերությունների կարգավորում՝ կապված ընդերքօգտագործման իրավունքների դադարեցման գործընթացի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցության/տեղեկացված լինելու ապահովման հետ 3.Իրավահարաբերությունների կարգավորում՝ նախատեսելով ընդերքօգ-տագործողների կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների իրագործման ավարտին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված գումարների վերահաշվարկման մեխանիզմ: 4. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման և օգտագործման համապատասխան մեխանիզմի սահմանում՝ ընդերքօգտագործման թույլտվությունների

				ժամկետների ավարտից հետո խախտված հողատարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացման համար
2.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	-	Շրջակա միջավայրի պահպանության դրամագիսին վճարների կարգավորում /վերջնական հատկացում/, ընդերքօգտագործողին դրամագլխից հատկացումներ կատարելու նպատակով՝ լիազոր մարմնի կողմից որոշում կայացնելու գործընթացի պարզեցում, հանքերի փակման ժամանակ խախտված տարածքների վերականգման աշխատանքների ֆինանսավորման ապահովում
3.	«Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարների արդյունավետ կառավարման և օգտագործման համապատասխան մեխանիզմների սահմանման և ներդրման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն	Ռեկուլտիվացիոն ֆոնդի հաշվեհամարում հավաքագրված դրամական միջոցների/գումարների արդյունավետ կառավարում՝ այդ գումարների ավանդների և այլ ձևերով ներդրումների իրականացման արդյունքում ստացված լրացուցիչ եկամուտների արդյունավետ օգտագործում
4.	Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրականացման ուղեցույցի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	-	Ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման ուղեցույց